


## ՀՀ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ



### Վարչական շրջաններ՝

- Աջափնյակ
- Ավան
- Արաբկիր
- Դավթաշեն
- Էրեբունի
- Կենտրոն
- Մալաթիա-Սեբաստիա
- Նոր Նորք
- Նորք-Մարաշ
- Նուբարաշեն
- Շենգավիթ
- Քանաքեռ-Զեյթուն

Տարածքը	223 քառ. կմ
ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.7 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	3 350.6 հա
այդ թվում՝ վարելահողեր	915.4 հա
Վարչական շրջաններ	12
Բնակչության թվաքանակը 2016թ. տարեվերջի դրությամբ	1 075.8 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2016թ.	36.0 %

### ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ

	Տարածքը, հա	Բնակչության թվաքանակը տարեվերջին, 1 000 մարդ	Վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի հետևյալ վարչական շրջանների հետ	Արտաքին սահմանագծով հարում է.	Ընդգրկում է հետևյալ թաղամասերը.
Աջափնյակ	2 582	109.2	Դավթաշեն, Արաբկիր, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա	ՀՀ Կոտայքի մարզին	Վահագնի, Սիլիկյան, Անաստասավան, Նորաշեն
Ավան	726	53.0	Արաբկիր, Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն	ՀՀ Կոտայքի մարզին	Ավան-Առինջ, Նարեկացի, Հովհաննիսյան, Իսահակյան, Թումանյան բնակելի զանգվածներ, Աղի հանք, Ավան

	Տարածքը, հա	Բնակչության թվաքանակը տարեվերջին, 1 000 մարդ	Վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի հետևյալ վարչական շրջանների հետ	Արտաքին սահմանագծով հարում է.	Հնդգրկում է հետևյալ թաղամասերը.
<b>Արաբկիր</b>	1 329	115.4	Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Կենտրոն, Քանաքեռ-Զեյթուն	ՀՀ Կոտայքի մարզին	
<b>Դավթաշեն</b>	647	42.5	Արաբկիր, Աջափնյակ	ՀՀ Կոտայքի մարզին	Դավթաշենի 1-4 թաղամասեր
<b>Էրեբունի</b>	4 749	127.2	Կենտրոն, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ, Նուբարաշեն	ՀՀ Կոտայքի և Արարատի մարզերին	Նոր Բուխանիա, Նոր Արեշ, Արգիշտի, Էրեբունի բնակելի համալիրներ, Սարի թաղ, Մուշավան, Ջրաշեն
<b>Կենտրոն</b>	1 335	125.6	Արաբկիր, Աջափնյակ, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն		Կոնդ, Զորագյուղ, Այգեստան
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	2 516	136.7	Աջափնյակ, Կենտրոն, Շենգավիթ	ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերին	Անդրանիկի թաղամաս, Նոր Սեբաստիա, Նոր Գիլիկիա, Հաղթանակ, Սպանդարյան, Արարատյան զանգված
<b>Նոր Նորք</b>	1 411	131.0	Ավան, Կենտրոն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Քանաքեռ-Զեյթուն	ՀՀ Կոտայքի մարզին	Նոր Նորքի 1-9 զանգվածներ, Ջրվեժի Բանավան, Մայակ թաղամասեր
<b>Նորք-Մարաշ</b>	476	11.8	Կենտրոն, Էրեբունի, Շենգավիթ	ՀՀ Արարատի մարզին	
<b>Նուբարաշեն</b>	1 724	9.8	Էրեբունի, Շենգավիթ	ՀՀ Արարատի մարզին	
<b>Շենգավիթ</b>	4 060	139.6	Կենտրոն, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նուբարաշեն	ՀՀ Արարատի մարզին	

	Տարածքը, հա	Բնակչության թվաքանակը տարեվերջին, 1 000 մարդ	Վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի հետևյալ վարչական շրջանների հետ	Արտաքին սահմանագծով հարում է.	Ընդգրկում է հետևյալ թաղամասերը.
Քանաքեռ-Զեյթուն	773	74.0	Ավան, Արաբկիր, Կենտրոն, Նոր-Նորք	ՀՀ Կոտայքի մարզին	

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին: Երևանը ՀՀ մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Երևանը ՀՀ Նախագահի նստավայրն է: Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը և այլն:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները: Երևանը ՀՀ ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաձյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

2016թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- ✓ արդյունաբերություն` 40.9 %
- ✓ գյուղատնտեսություն` 1.2 %
- ✓ շինարարություն` 61.0 %
- ✓ մանրածախ առևտուր` 74.0 %
- ✓ ծառայություններ` 80.6%

Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՇՐՋԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2016թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10 000	5 376	4 624
Ծնվածներ, մարդ	143	69	74
Մահացածներ, մարդ	86	42	44
Ամուսնություններ	61	X	X
Ամուսնալուծություններ	15	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	23.9	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	303	147	156
հանրակրթական	1 107	529	578
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	223	144	79
նախնական մասնագիտական (արհեստագործական)	22	6	16
միջին մասնագիտական	110	62	48
բարձրագույն մասնագիտական	733	395	338
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	49 917	...	...
Մարզիկներ, մարդ	175	31	144
Զբաղվածներ, մարդ	2 528	1 190	1 338
նրանցից՝ զիտական հիմնարկներում	41	22	19
նրանցից՝ զիտության դոկտոր	4	1	3
զիտության թեկնածուներ	14	7	7
ուսուցիչներ	95	85	10
բժիշկներ	88	...	...
միջին բուժանձնակազմ	81	...	...
Գործազուրկներ, մարդ	1 038	461	577
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակատուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 582	978	604
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	160	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	10 000	...	...
թատրոն	3 937	...	...
համերգ	1 288	...	...
թանգարան	19 079	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	87	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	42	X	X
միջին ծանրության	27	X	X
ծանր	17	X	X
առանձնապես ծանր	1	X	X

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են: